№ 81 ՄԱՅԻՍԻ 19 (31) 1878 ՄԱՅԻՍԻ 19 (31) № 81

ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլ. կէս տարվանը 6 րուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կօպէկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մխիթարեան միաբանութիւնը և հայերը։—Ներքին տեսութիւն։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ցոյներ և հայեր։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքի լուրեր։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Ջալալեդդին։

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Այս րօպէիս առաջանք Վենեցիայի Մխիթարեանների «Բազմավէպ» եռամսեայ հանդիսի վերջին տետրակը։

Մարդը շփոթվում է, զարմանում է, վրդովվում է, երբ այդ հրատարակութիւնը հետաքրքրութեամբ բաց անելուց և տետրակի բովանդակութիւնը աչքի տակ անցնելուց յետոյ, ստիպված է զզվանքով կողմ գցել տետրակը... Տխուր մտածմունքներ տիրում են մարդուն....

Մինչև որ Թիւրքաց հայերը ճգնաժամի մէջ են, մինչև որ քուրդերը և Թիւրքերը անխնայ կոտորում են հայերին, մինչև որ վճռվում է նրանց հայրենիքի վիճակը,—մի գրական հանդէս, որ հրատարակվում է Եւրոպայում, ազատ հողի վրա, Իտալիայում զետեղված հայոց միաբանութեան ձեռքով՝ մի խօսք էլ չէ ասում հայերի ներկայ դրութեան վրա...

Բաց արէք տետրակը և աչքի տակ անցրէք նրա բովանդակութիւնը, և ահա՛ ինչ նիւթերի կը պատահէք՝ «Երեմանեայ պատերազմն ի Հայս» (դար չորրորդ), «Երա Գեղեցիկ», «Գիրք Ծննդոց նախ քան զՄովսէս», և այլն և այլն....

Վերջապէս ամբողջ տետրակը կամ հնախօսական է, կամ եւրոպական նոր գիտերի ժողովրդացնող նիւթեր է պարունակում, ինչպէս օրինակ «Հեռախօս գործի», և այլն....

Ամբողջ տետրակը, ինչպէս էին նրա նախընթացները և ինչպէս կը լինեն երևի նրա յաջորդները՝ ներկայացնում է կատարեալ գերեզմանական մեռելութիւն, առանց ներկայացնելու հայ ընթերցողին ժամանակակից հետաքրքրութեան ամենափոքրիկ նշոյլ։

Ասենք թէ Մխիթարեանները մի ժամանակ շատ են արել հայութեան համար, և նրանց աշխատութիւնները յարմար էին ազգի ժամանակակից պահանջմանը,—բայց մի՞թէ դա արժանաւորութիւն է, եթէ մի որ և է հիմնարկութիւն յամառութեամբ անշարժ է մնում մի անգամ ընտրված, մի ժամանակ օգտաւէտ եղած, բայց այժմ արդէն հնացած, փտած, անպէտք ուղղութեան մէջ....

Ասենք թէ Մխիթարեան ուխտի «Բազմավէպ» անուանված օրգանը ուսումնական հրատարակութիւն է,—բայց մի՞թէ գիտութիւնը չը պէտք է հետաքրքրվի ազգային կեանքով, եթէ այն ազգի հասարակական հանգամանքները փոխվել են....

Մենք չենք վախենում ասել, որ Մխիթարեանների ազգի այս ճգնաժամի ժամանակ բռնած գիրքը, նրանց դէպի ազգային երեւոյթները ցոյց տուած սարսափելի անտարբերութիւնը՝ կատարեալ յանցանք է։

Ինչքա՜ն բան կարող էր անել Մխիթարեան ուխտը, ի՞նչ մեծ գործ կարող էր այս րօպէիս տեսնել Վենեցիայի միաբանութիւնը եթէ ուզենար....

Մենք պնդում ենք՝ Մխիթարեանները այս դժուար ժամանակներում պարտազանց են հանդիսանում դէպի իրանց հայրենակիցները....

Նոքա կարող էին իրանց գրվածներում ներկայացնել Եւրոպային իրանց հայրենիքի ներկայ դրութիւնը, կրթված աշխարհի ուշադրութիւնը դարձնել Հայաստանի վրա թէ հայերէն, թէ օտար լեզուներով հայերի մասին գրվածներ հրատարակելով, քաղուածքներ անել Թիւրքիայի և Ռուսաստանի հայոց լրագիրներից....

ՋԱԼԱԼԵԴԴԻՆ

(ՄԻ ՊԱՏԿԵՐ ՆՐԱ ԱՐՇԱՒԱՆՔԻՑ)

Ե.

Ամփոփելով հօր մարմինը իր անշուք գերեզմանի մէջ, երիտասարդը կրկին շարունակեց իր ճանապարհը։ Նա այժմ գնում էր բոլորովին խելագարի նման, ընկած դառն մտածութիւնների մէջ. կորցնելով հայր, մայր, եղբայր և քոյրեր, նա այժմ սարսափելի կասկածի մէջ էր՝ կորցնել և նրան, որին սիրում էր։ Այս պատճառով շտապում էր նա։ Բայց դեռ բաւական ճանապարհ կար, մինչև կը հասնէր այն գիւղը, ուր բնակվում էր նա։

Նա գնում էր այնպիսի անանցանելի շաւիղներով, որոնց շրջակայքում, ժայռերի, մացառների և Թփերի մէջ մի ամբողջ բանակ կարող էր Թագչիլ և ուղևորի աչքից անյայտ մնալ։ Եւ այս պատճառով մեծ եղաւ նրա զարմանքը, երբ մի քանի անգամ նրա ականջներին զարկեցին անորոշ ձայներ, յետոյ պարզ լսելի եղաւ իր անունը՝ «Սարհատ, Սարհատ»։ Ո՞վ կարող էր լինել դա. Նոյն շրջակայքում հազիւ թէ մի մարդ կարող էր ճանաչել նրան, թէև նա ունէր ընկերներ, բայց նրանց մի քանի օր առաջ, զանազան յանձնարարութիւններով ուղարկել էր դէպի զանազան կողմեր։ Մտածեց. գուցէ նրանցից մէկը լինի, և մատը բերանին դնելով, խորհրդական ձայնով շվացրուց։ Նրան պատասխանեցին բաւական մօտաւոր տեղից, բայց ձայնը շատ օտարոտի երևաց։ «Նրանցից և ոչ մէկը լինել չէ կարող» մտածեց ինքնիրան, և հրացանը ուսից վերբերելով, կանգնեց, իր շուրջը նայելով. Նոյն միջոցին «Սարհատ» անունը կրկին զարկեց նրա ականջներին, երկու Թևեր փաթաթվեցան նրա վզովը, և մի մարդ սկսեց ջերմ համբոյրներ ափել նրա երեսի վրա։

—Երևի, իմ տէրը չէ ճանաչում իր ծառային, ասաց նա քրդերէն լեզուով։

—Ճանաչեցի, Մըստօ, պատասխանեց երիտասարդը և ուրախութեամբ համբուրեց նրան։

Մըստօն ազգով քուրդ էր եզիդիների աղանդից. նա երիտասարդի հօր հովիւն էր և նրա մանկութեան ընկերը։ Մի կլորիկ պատանի էր Մըստօն խիստ աշխոյժ և հաւատարիմ, երբ Թողեց նրան երիտասարդը, իսկ այժմ գտնում էր նրան հասակն առած և բոլորովին այրական դէմք ստացած։ Նա զինաւորված էր թեթև կերպով. ունէր միայն հրացան, Թուր և ատրճանակներ։ Երիտասարդը շատ ուրախացաւ, որ հանդիպեցաւ իր հօր տան հաւատարիմ ծառային, և աւելի այն պատճառով, որ նրանից կարող էր քաղել այն տեղեկութիւնները, որ իրան շատ հարկաւոր էին։

—Ա՛խ, ո՜րքան յիմար եմ ես, Սարհատ, ասաց Մըստօն իր սովորական ծիծաղով.—քիչ էր մնում, որ չը ճանաչէի քեզ. հէնց որ տեսայ, մտայ Թփի ետևը, հրացանս ուղղեցի... հէնց տրըխկացնելու վրա էի, մէկէլ աչքիս ընկաւ ճակատիդ սպին. ինձ ու ինձ ասեցի. դա աղան է, էլ չարձակեցի...։—Ա՛խ, ինչպէս փոխվել ես դու, սատանան չի ճանաչի։

Մըստօն կրկին փաթաթվեցաւ և կրկին սկսեց համբուրել իր տէրին։

—Դու ուզում էիր ինձ սպանել, Մըստօ, հարցրեց երիտասարդը։

—Պա՛։ Ուզում էի նիզակդ խլել. իմը կոտրվեցաւ։ Առանց նիզակի քուրդին ամօթ է ման գալ։

—Երբ կոտրվեցաւ։

—Կռիւ ունեցայ քրդերի հետ, երբ մեր ոչխարները Թալնում էին։ Բոլորը տարան անհաւատները, մի հատ էլ չը Թողեցին։ Քո քուռակն էլ տարան, Սարհատ, այն կապոյտ քուռակը. մի տեսնէիր, ինչ լաւ ձի էր դարձել.—ամեն օր լաւ ուտացնում, չաղացնում էի, ասում էի, մի օր աղան կը գայ կը նստի. տարան անհաւատները... այնքան ոչխարներից մէկն էլ չը Թողեցին։

—Մեր ոչխարները։

—Ձերը. բա ո՞ւմը. Մատօն խօ ոչխար չունի։ Ոտքիս էլ գնտակ դիպաւ։ Բայց ես էլ մի քանիսին գլորեցի....

—Հիմայ ո՞ւր էիր գնում այսպէս կաղլիկ ոտով։

—Գնում էի այս կողմը... բան կար....

—Ի՞նչ կար։

—Ա՛խ, լեզուս չէ բռնում, որ ասեմ... անիծուին քրդերը... աղայինըս...

Մըստօն չը կարողացաւ իր խօսքը վերջացնել, նրա աչքերը լցվեցան արտասուքով և սկսեց երեխայի նման հեկեկալ։

—Սպանեցին... իմանում եմ, ասաց երիտասարդը։—Գնում էիր ինչ անես։

—Թաղեմ։ Խօ այնպէս չէի Թողնելու։ Իմ աղան լաւ աղայ էր։

—Ես Թաղեցի, պատասխանեց երիտասարդը տխուր ձայնով։—Դու էն ասա, Մըստօ, թէ մի բան գիտես մօրս, քոյրերիս և եղբօրս մասին։

—Մըստօն ամեն բան գիտէ. գիժ չէ՞, որ չը գիտենայ։—Գլխիցը պատմեմ։

—Ո՛չ, կարճ կապիր։ Ինչ կը հարցնեմ, էն ասա։

—Լաւ, հարցրու։

—Ե՞րբ եկան քրդերը։

—Քրդերը եկան երկու օր առաջ. գիշեր էր, երբ եկան նրանք. մարդիկ բոլորն էլ քնել էին։ Նրանք շատ չէին, հարիւր ձիաւոր հազիւ կը լինէին որ եկել էին մեր գիւղի վրա. միւսները գնացել էին ուրիշ գիւղերի վրա։ Բայց հայի գիւղը Թալնելու համար տասը ձիաւոր էլ բաւական է։—Ի՞նչու հայերը ղոչաղ չեն, աղայ, դա լաւ չէ, դա շատ վատ է։—Լացն ու աղաղակը բարձրացաւ, երբ նրանք խրճիթների դռները կոտրատեցին և ներս մտան։ «Ցօ, խանխառաներ, ասում էի ես հայերին, խօ կնիկ չէք, մարդ էք. Թէ որ Թուր ու Թուանգ չունէք. քարով. փայտով, կացինով խփէք, ու դուրս արէք էդ շներին»։ Բայց ով էր իմ ձէնը լսողը։ Առաջ նրանք սկսեցին դուրս տալ, ինչ որ տանելու էին, Թէ ապրանք, Թէ կին և Թէ աղջիկ. բայց մնացած անպիտան ապրանքները՝ ծերերի, պառաւների, երեխաների հետ՝ Թողեցին խրճիթներում, դռները կրկին փակեցին, յետոյ կրակ տուեցին, այրեցին։ Իսկ տղամարդերին կոտորում էին։

—Ոչ ոք չազատվեցա՞ւ։

Ազատվեցան նրանք միայն, որ առաջուց բանը գիտէին, ու փախել գնացել էին սարերում, Թաք էին կացել։ Բայց շատերը չէին հաւատում, Թէ քրդերը այնպէս կանէին. նրա համար որ, գայմակամը գրում էր ժողովրդին՝ իրանց տեղում հանգիստ մնան, չը վախենան։ Խաբում էր անիծուածը։

—Մեր տան հետ ինչ պատահեց։

—Հայրդ տանը չէր, գնացել էր Բաշ-Կալայ, ինձ ասաց.—Մըստօ, տունը պահիր, մինչև ես կը դառնամ։ Ես արթուն էի, երբ քրդերը եկան, հրացանը ձեռիս կտուրի վրա կանգնած էի։ Բայց ինչ կարող էր անել մենակ Մըստօն այնքան գազաններին. մի տասը տղամարդ եթէ հետս ունենայի, նրանց չէի Թող տալ, որ գիւղն էլ մտնէին, բայց մենակ էի։ Ես ձեռք էլ չը բարձրացրի. նրա համար որ, քուրդի խասեաթը լաւ էի իմանում, հէնց որ մէկին դիպչէի, ոչ մի հոգի կենդանի չէին Թողնի։ Ես աշխատում էի մի կերպով ընտանիքը ազատել. մնացածը, ասում էի, գլուխը քարը, Թող տանեն։ Առանց ժամանակ կորցնելու, ես տնից դուրս հանեցի մօրդ, եղբօրդ և երկու քոյրերիդ. բայց այնքան յիմար էի, որ չը մտածեցի, Թէ տանը օրօրոցի մէջ տղայ մնաց։ «Երեխաս, երեխաս» բռաւաց մայրդ և վազեց դէպի տունը։ Ես մնացի երկու սրի մէջ տեղում, չէի իմանում, դէպի ո՞ր կողմը դառնամ։ Եթէ աղջիկներին Թողնէի, քրդերը կը տանէին.—լաւ է, ասեցի դըրանց տանեմ մի տեղ Թաքցնեմ, յետոյ դառնամ դէպի մայրը։ Եղբօրդ և քոյրերիդ Թաքցրի գիւղից հեռու դարու արտի մէջ և շուտով վազեցի դէպի մայրդ։ Երբ հասայ, տեսայ, տունը վառվում էր բոցերի մէջ. բայց խեղճ կինը ոչ իմ կանչելուն ականջ դրեց, և ոչ էլ բոցերին մտիկ տուեց, մտաւ կրակի մէջ... այն րօպէում փուլ եկաւ կտուրը և նա էլ դուրս չեկաւ....։

Վերջապէս Եւրոպայում գտնուած այդ հայոց օգնէսը կարող էր հաւատարիմ արձագանք դառնալ ազգի հառաչանքների։

Այց ոչ, Մխիթարեան միաբանութիւնը մի քայլ չէ արել դէպի առաջադիմութիւն, նա նոյն է մնացել, ինչ որ էր իր հիմնարկութեան օրը....

Նա այդ ծանր ժամանակներում պարտաղանց, յանցաւոր է հանդիսացել դէպի ազգը և արժանի է դարձել ամբողջ ազգի ամենախորին արհամարհանքի։

Մենք միշտ ասել ենք և այժմ էլ կրկնում ենք՝ պատմութիւնը մեզ ապացուցանում է որ ոչ մի ազգ չը պէտք է սպասի իր փրկութիւնը հոգևորականների որ և է հիմնարկութենից։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երկուշաբթի, մայիսի 22-ին հայ թատրոնասէրները ԹԻՖԼԻՍԻ ամարային թատրոնում բարեգործական նպատակով կը ներկայացնեն Շիլլերի «Աւազակներ» դրամայից երեք գործողութիւն և պ. Գ. Սունդուկեանի «Գիշերվան սարը խէր է» վոդեվիլը։ Պ. պ. թատրոնասէրները տեղերի գները սովորականից թանգ են նշանակել։ Այս հանգամանքը կարող է պատճառ լինել, որ հասարակութիւնը չը գնայ թատրոն, իսկ եթէ գնայ էլ այդ գները նրա համար բաւական մեծ հարկ է, կամայ ակամայ պէտք է տայ։

—

ՍՂՆԱՂԻՑ մեզ գրում են. «Այս տարվայ անդադար եկած անձրևները բաւական վնաս պատճառեցին։ Ջուզան անուանված գիւղում, որ Սըղնաղին մօտ է, մայիսի 10-ին հեղեղը մի վրացու տուն է քանդել և իր հոսանքով տարել է տան 11 բնակիչներին, որոնցից 6 աղատվել են, իսկ միւսները խեղդվել։ Խեղդվել են գիւղացու մի 5 տարեկան տղայ, երկու աղջիկ, մինը 7 իսկ միւսը 12 տարեկան և նրանց մայրը, որի դիակը մինչև այժմ դեռ չեն գտել։ Վնասը 100 բուբլու է հասնում։»

—

ՍՂՆԱՂԻՑ մեզ գրում են. «Ցեղացի կանայք բոլորովին բարձի թողի են արել իրանց ընտանեկան գործերը և զբաղված են լօռս խաղալով։ Մայրերը տանում են իրանց հետ երեխաներին և արթուն են պահում մինչև կէս գիշերը։ Երեխաների լացը կտրելու համար նրանց մրգեղէնով առատ կերակրում են, որ բաւական վնասում է։ Թէ որքան հայ մայրերը անհոգ են կատարում իրանց պարտականութիւնները, կարելի է դատել հետևեալ անցքից, որ պատահել է մերձակայ գիւղում։ Մի մայր պատուիրում է ծառային տաքցնել աղիւսը, փաթաթել չորի մէջ և նրա վրա նստացնել իր երեխային, որի փորը ցաւում էր։ Ծառան տաքցնում է աղիւսը և առանց նրան չորի մէջ փաթաթելու, տաքացած քարի վրա նստեցնում է երեխային, որ չուտով մեռնում է։

—

ԹԵԼԱՒԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ լուր է տարածվել, իբր թէ Բագու-Թիֆլիսեան երկաթուղու գիծը պէտք է Կախէթով անցնի։

—

Մեզ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ ասենիզացիայի բաժինների մէկից մարդ է նշանակած, որ իր բաժնի իւրաքանչիւր տանից հաւաքում է մի մի բուբլ տներում եղած աղբը դուրս տանելու արկղ չինելու համար։ Փողերը հաւաքած են, բայց մինչև այժմ արկղը չը կայ։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի ուսումնարաններում չուտով կը սկսվեն տարեկան հարցաքննութիւնները։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՑՆԵՐ ԵՒ ՀԱՅԵՐ

—

«Pol. Corr.» լրագրում տպված է մայիսի 2-ից Կ. Պօլսից գրած հետևեալ նամակը։ «Բացի Մեծ Իշխանի վերջին զօրախաղի ժամանակ ասած կարճ և ազդու ճառից, իր ճանապարհ ընկնելու օրը նա հետևեալ հրամանը հրատարակեց. «Օֆիցէրներ և զինուորներ. ես ցաւելով բաժանվում եմ ձեզանից, բայց իմ սիրտը յաւիտան ձեզ մօտ կը մնայ։ Պատերազմը վերջացած է, բայց ոչինչ զարմանալի չէ, եթէ մենք նորից կը կռուենք։ Ես հաւատացած եմ որ դուք միշտ ձեր պարտականութիւնը կը կատարէք, կատարեցէք և Թագաւորին և Հայրենիքին տուած հաւատարմութեան երդումը. Ձեզ վրա այնպիսի գեներալ են նշանակում, որի քաջութիւնը և ընդունակութիւնները ամբողջ աշխարհին յայտնի են։ Երևի Սան-Ստէֆանոում դեռ ես երկար կը մնաք։ Պահպանեցէք միշտ, ինչպէս մինչև այժմ պահպանել էք, կարգը և կանոնը։ Մանաւանդ խնդրում եմ ձեզ վարվել Թիւրքերի հետ, ինչպէս եղբայրների հետ։ Վերջին խօսքերը իրանց վրա ուշադրութիւն դարձրին և Թիւրքերը այդ խօսքերի մէջ տեսան իրանց համար շողոքորթող բան։

«Մեծ-Իշխանի Լիվադիա նաւով ճանապարհ ընկնելու րոպէին, հետևեալ անցքը պատահեցաւ. յունաց և հայոց հոգևորականութիւնը Սան-Ստէֆանոում առանձին խմբերով կանգնեցին Դարեանի դասակերտի երկու կողմերում Մեծ Իշխանին կրկին ողջունելու համար։ Երկու կողմերից տարան նրա մօտ աւետարան և խաչ։ Մեծ Իշխանը ուղղակի մօտեցաւ հայերին և շատ բարեկամաբար շնորհակալութիւն յայտնեց նրանց այդ ուշադրութեան համար։ Քահանային նա ձեռք մեկնեց և բարեպաշտութեամբ համբուրեց խաչը և աւետարանը։ Սրանից յետոյ դէպի յոյները անցաւ և հարևանցի կերպով համբուրեց խաչը։

«Յոյների վարվելու եղանակը ոչ մի կերպով չէ կարող ռուսների համակրութիւնը գրաւել։ Մեծ Իշխանին անյայտ չը մնաց այն ինչ որ պատահեց զատիկ օրը Պերայում։ Կէսօրին յունաց 100,000 մարդուց բաղկացած մէկ հանդէս առաջ գնաց դէպի Գալատա-Սէրայը, որտեղ բնակվում է մուտեսարիֆը, այսինքն Թիւրքաց Պերայի վերակացուն։ Յունաց եպիսկոպոսը մաղթանք կատարեց, որի մէջ երկնքի օրհնութիւնը թափում էր սուլթանի գլխին։ Զապտիները պատուելու ցոյցեր արին յունաց հոգևորականութեան և թնդանօթների բազմաթիւ որոտումներով ողջունեցին յունաց աղօթքը։ Այս բանից յետոյ հանդիսականների բազմութիւնը գնաց դէպի անգլիական դեսպանի մօտակայ տունը, ուր նա բարձր աղաղակում էր «ցիսոо պ. Լայարդին, անգլիական թագուհու պատուի համար։

«Մի և նոյն ժամանակ պէտք է ասած, որ թիւրքաց պօլիցիան յոյներին արգելում էր զատիկը ոտնելու ժամանակ հրացաններ արձակել, բայց այս անգամ գնդող պօլիցիան թոյլ տուեց մինչև անգամ գնդարձակութիւնը, որովհետև յոյները այժմ մահմետականների ամենալաւ բարեկամներ են։ Իգուր չէր որ սուլթանը 100,000 պիաստր ընծայեց յունաց պատրիարքին այն ժամանակ, երբ մահմետական փախստականները կատարելապէս սովից մեռնում էին։

«Իսկ հայերը և բօլգարները, ընդհակառակ, վախենալով, որ նրանք կրկին Թիւրքերի լծի տակ կընկնեն, ամբոխ կերպով ռուսների կողմն ունեն բռնած, աղօթում են պատերազմի յաջող կերպով վերջանալու համար և խոստանում են օգնել նրանց թէ փողով և թէ մարդկերանցով։

Անցեալ կիւրակի օր, Մեծ Իշխանը հայոց Ներսէս պատրիարքին ընդունեց որ եկել էր նրա մօտ Զատկի տօնի պատճառով և խնդրում էր նրան ընդունել ոսկի խաչը։ Մեծ Իշխանը պատասխանեց նրան, որ այս խաչը ներկայ պատերազմի ամենալաւ յիշատակը կը լինի, բայց որ նրան, աւետարակ, հայերին երբէք չը մոռանալու համար նիւթական նշան չէ հարկաւոր։ ՀԱՒԱՏԱՑԱՆ ԵՂԷՔ, ԱՍԱՑ ՆՆ, ՈՐ ՄԵՆՔ ԵՐԲԷՔ ՉԵՆՔ ՄՈՌԱՆԱՑ ՀԱՅԵՐԻՆ։ Այս բանից յետոյ նա հաղորդեց, որ Ռուսաստանը Վան դաւառում գունդեր ուղարկեց, քուրդերին արտաքսելու և հայերին պաշտպանելու համար։ Նորերումս գեներալ Սկոբելէվ (կրտսերը), Մեծ Իշխանի ցանկութեամբ, գնաց պատրիարքի հետ տեսնելու մօտ է, մայիսի 10-ին հեղեղը մի վրացու տուն է քանդել և իր հոսանքով տարել է տան 11 բնակիչներին, որոնցից 6 աղատվել են, իսկ միւսները խեղդվել։ Խեղդվել են գիւղացու մի 5 տարեկան տղայ, երկու աղջիկ, մինը 7 իսկ միւսը 12 տարեկան և նրանց մայրը, որի դիակը մինչև այժմ դեռ չեն գտել։ Վնասը 100 բուբլու է հասնում։»

—

ՍՂՆԱՂԻՑ մեզ գրում են. «Ցեղացի կանայք բոլորովին բարձի թողի են արել իրանց ընտանեկան գործերը և զբաղված են լօռս խաղալով։ Մայրերը տանում են իրանց հետ երեխաներին և արթուն են պահում մինչև կէս գիշերը։ Երեխաների լացը կտրելու համար նրանց մրգեղէնով առատ կերակրում են, որ բաւական վնասում է։ Թէ որքան հայ մայրերը անհոգ են կատարում իրանց պարտականութիւնները, կարելի է դատել հետևեալ անցքից, որ պատահել է մերձակայ գիւղում։ Մի մայր պատուիրում է ծառային տաքցնել աղիւսը, փաթաթել չորի մէջ և նրա վրա նստացնել իր երեխային, որի փորը ցաւում էր։ Ծառան տաքցնում է աղիւսը և առանց նրան չորի մէջ փաթաթելու, տաքացած քարի վրա նստեցնում է երեխային, որ չուտով մեռնում է։

—

ԹԵԼԱՒԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ լուր է տարածվել, իբր թէ Բագու-Թիֆլիսեան երկաթուղու գիծը պէտք է Կախէթով անցնի։

—

Մեզ հաղորդում են, որ ԹԻՖԼԻՍԻ ասենիզացիայի բաժինների մէկից մարդ է նշանակած, որ իր բաժնի իւրաքանչիւր տանից հաւաքում է մի մի բուբլ տներում եղած աղբը դուրս տանելու արկղ չինելու համար։ Փողերը հաւաքած են, բայց մինչև այժմ արկղը չը կայ։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղի ուսումնարաններում չուտով կը սկսվեն տարեկան հարցաքննութիւնները։

Քարացածի նման լսում էր երիտասարդը այս բոլորը։ Նա գունաթափվել էր մարմարիոնի պէս, և բարակ շրթունքները դողդողում էին տենդային անհանգստութեամբ։ Արտասուք նրա աչքերում չէր երևում։

—Հայրս ինչու գնաց Բաշ-Կալայ, հարցրեց նա դողդոջուն ձայնով։

—Երբ լսեցին, թէ Շեյխը հրամայել է գաւուրներին կոտորել, ամենի վրա երկիւղ ընկաւ, չէին իմանում, թէ ինչ անեն, որ կողմը փախչեն, որ ազատվեն։ Այն ժամանակ հայրդ հաւաքեց գիւղերի տանուտէրներին երկու քահանայի ու մի վարդապետի հետ գնացին Բաշ-Կալայ, որ մուդուրին, գայմակամին ասեն, որ նրանք ասկար (զինուոր) ուղարկեն երկիրը պահպանելու։ Մուդուրն ու գայմակամը առաջ խոստացել էին, թէ ասկար կուղարկեն, յետոյ այսօր-էգուց գցելով, այնքան ուշացրել էին, մինչև քուրդը եկաւ, իր բանը տեսաւ...։ Յետոյ գնացողներն տեսնելով, որ գայմակամը խաբում է, յոյսը կտրած յետ էին դարձել։ Բայց քուրդերը իմանալով, որ գայմակամի մօտ էին գնացել, ճանապարհին բռնել էին, և անպէս էին արել, որ դու ինքդ քո բարի աչքով տեսար....

—Հիմայ ո՞րտեղ են քոյրերս, եղբայրս, հարցրուց երիտասարդը, երկչոտ վստահութեամբ, մի գուցէ նրանց էլ մի փորձանք պատահած լինի։

—Նրանք հիմայ լաւ տեղում են. ես տարայ նրանց մեր էլի (ցեղի) մէջ։ մեր չադրումն են կենում կնոջս մօտ։—Դու չքս իմանում, Սարհատ, ես ախար հիմայ կին ունեմ, մի երեխայ էլ ունեմ, մի սիրուն երեխայ։ Հայրդ (Աստուած նրա հոգին լոյսի բաժին անէ) ինձ պսակեց, մի լաւ աղջիկ բերեց, և հարիւր ոչխար էլ տուեց, ասում էր. «Մըստո, բաւական է, ինչ որ ծառայեցիր, գնա դրանից յետոյ քեզ համար ապրիր, տուն ու տեղի տէր դարձիր։» Բայց ես ձեր տան հացը կերել էի, նրանով էի մեծացել, ասում էի,—չէ, աղայ, քո տան մէջ պէտք է մեռնեմ, և քանի Սարհատը չի եկել, ես քո մեծ որդին կը լինեմ.

Երիտասարդի սիրտը չը դիմացաւ այս խօսքերին, նա գրկեց Մըստոին, և ճակատիցը համբուրեց, ասելով։

—Դարձեալ դու իմ եղբայրը կը լինես, բարի Մըստո, ես քեզանից չեմ բաժանվի։—Բայց դու այն ասա, կարծում ես, որ եղբայրս և քոյրերս ձեր չադրում ապահով կը մնան։

Պատանի քուրդը ինքնավստահ պարծենկոտութեամբ պատասխանեց։

—Շեյխ Ջալալեդդինը իր բոլոր աւազակներով Մըստոի չադրը մտնել չէ կարող։ Դու ինքդ լաւ ես իմանում եզիդիների ղէյրաթը (նախանձախնդրութիւնը)։ մի մարդ, ինչ ազգից էլ որ լինէր նա, երբ մտնում է եզիդիի չադրի տակը, այն ցեղի բարի հիւրն է համարվում. այն ժամանակ բոլոր ցեղը իր արիւնը կը թափի և իր հիւրին թշնամու ձեռքը չի տայ։

Ցանկարծ նա խօսքը կտրեց և սկսեց ուշադրութեամբ ականջ դնել։

—Լսում ես, հարցրուց նա, այդ ձայները,

—Ի՞նչ ձայներ, հարցրուց երիտասարդը, որովհետև նա այն աստիճան խռովված էր, որ ոչինչ ձայն չէր լսում։

—Երգում են...։ Այսպէս երգում է քուրդը, երբ թալան և գերիներ է տանում։

—Ուրեմն գնանք, ասաց երիտասարդը։

—Գնանք, կրկնեց պատանին։

Երկուքն էլ դիմեցին դէպի այն կողմը, որտեղից լսելի էին լինում ձայները։

Զ.

Կէս ժամից յետոյ նրանք գտնվում էին մի լեռան բարձրաւանդակի վրա, որտեղից նկատեցին ձորի մէջ մի ընթացող քարաւան, որը հեռաւորութեան պատճառով թէև պարզ չէր նըշմարվում, բայց նրա օտարոտի երևոյթը խիստ կասկածաւոր ձև էր տալիս նրան։

—Մենք քարաւանի առաջը չը կտրենք, թէ որ այս կողմով գնանք, ասաց Մըստոն ցոյց տալով հազիւ նկատելի շաւիղը, որ միայն որսորդներին էր մատչելի։

—Բայց ես չեմ ուզում, որ նրանք տեսնեն մեզ, ասաց Սարհատը խորհրդաւոր ձայնով։

—Տեսնել չեն կարող, հազար աչք էլ ունենան տեսնել չեն կարող. այս լեռները ես ճանաչում եմ, որպէս իմ հինգ մատը։ Գնանք։

Մըստոի ընտրած ճանապարհը, թէև շատ դժուարին էր և անդադար սարսափելի եզերքներով էր գնում, բայց այնքան կարճ և կըրուկ էր, որ շուտով նրանք անցան քարաւանը, և անտեսանելի կերպով թաքչելով թփերի մէջ, սկսեցին հեռուից դիտել նրան։ Սարհատը մի հարևանցի հայեացք ձգելով քարաւանի վրա, տեսաւ, որ դա քուրդ ասպատակների մի մեծ խումբ էր, որ տանում էին աւար և գերիներ։ Նա դարձաւ դէպի իր ընկերը այս խօսքերով։

—Կարող ես, Մըստո, մի կերպով մտնել այս քարաւանի մէջ և իմանալ, թէ գերիները որ տեղից են բերում, ուր են տանում, և այս գիշեր որտեղ կիջևանեն, կամ իրանք քրդերը ինչ ցեղից են։

—Բոլորը կարող եմ գիտենալ։

—Ի՞նչպէս կը մտնես նրանց մէջ։

—Ինչպէս պէտք է մտնել, ինձ խօ չեն ուտի. կը գնամ, բարև կը տամ, քէֆները կը հարցնեմ, յետոյ ես գիտեմ, թէ ինչ կասեմ....

Լաւ, գնա, չուշանար։

Մըստոն սատանայի նման անհերևութացաւ։ Իսկ Սարհատը այժմ սկսեց աւելի հետաքրքրութեամբ նայել քարաւանին։ Ի՞նչ էր տեսածը։ Ձիաւոր քրդերի մի բազմութիւն, եզների, աւանակների և սայլերի վրա բարձած, քշում էին խառնիճաղանճ քարաւանը, որ տանում էր տընային կարասիք և զանազան տեսակ իրեղէններ։ Բեռների վրա կապել էին մի-մի կամ երկու-երկու կին, աղջիկ և մանկահասակ պատանիներ։ Աւարը և գերիները միասին մի բեռն էին կազմում, և քշում էին առաջ ամենայն սաստկութեամբ։ Նրանք տարվում էին անասունների վրա, որ պատկանում էին թշուառ գերիների ծնողներին։ Տէրը իր անասունի վրա նստած, գերի էր գնում։ Քարաւանի ընթացքը շտապեցնելու համար քրդերը ցցած ունէին իրանց նիզակների ծայրերին մարդկային կառափներ. ծընողների կտրած գլուխը ցոյց էին տալիս որդիներին, որպէս մի խրատիչ, որ վախենան, որ փորձ չը փորձեն փախչելու, չուտ-չուտ գնան, ուր որ տանում են նրանց և ձայն չը հանեն....

Սարհատը երկար նայել չը կարողացաւ, նրա գլուխը պտտվեցաւ. և քարաւանը անցաւ։

Նրան այնպէս էր թուում, որ աշխարհս փոխվել է, նեռը յայտնվել է, և մարդը, Աստուծու պատկերը, կատաղի գազան դարձած, իր նման մարդերի արիւնը ծծում է, նրանց միսը ուտում է։ Նա շատ էր ցանկանում ինքն էլ նոյն գազաններից մէկը լինել, և դրա համար այրական սիրտ և բաւական քաջութիւն ունէր. բայց ափսոսում էր, որ մենակ է, շատ ընկերներ չունի...։

Ցուսահատութիւնը շատ անգամ ակամայ կերպով ձգում է մարդուն ծայրայեղ մտածութիւնների մէջ։ Սարհատը բնութեամբ բարի էր, բայց հանգամանքները նրան չար էին չինել. Նա տեսնում էր մի ամբողջ ժողովուրդ, և այն ժողովուրդը, որին ինքն էլ էր պատկանում, հաւի նման մորթում են, տունը աւերակ են դարձնում, կայքը յափշտակում են, որդիքը գերի են տանում,— և այդ ժողովուրդը ոչինչ միջոցներ չունի պաշտպանվելու։ Նա գիտէր, որ այս սոսկալի պատահարները դարերով կրկնվում են նոյն ժողովրդի հետ և տակաւին նա չէ մտածել ընդդիմադրութեան մի զօրութիւն կազմելու։ «Եթէ կարիքը, ասում էր նա, մարդու վարպետ է անում, եղանակների խստութիւններից պաշտպանվելու համար նա հագուստ է հնարում, գազաններից պաշտպանվելու համար զէնքեր է հնարում, ինչու չէ մտածում նա մի և նոյն խելքը բանացնել մարդակերպ գազանների ձեռքում զոհ չը դառնալու համար.» Այսպէս մտածելով, Սարհատը այն եզրակացութեան էր հասնում, թէ այն ժողովուրդը ինքն էր մեղաւոր, որ կնամի պահանջները չէր հասկացել, և չէր մտածում թէ ինքը երկրի վրա է բնակվում, մարդիկների հետ գործ ունի և ոչ թէ հրեշտակների հետ....

սակցելու և խօսելու ժամանակ ասաց վերջինին. «ՄԵՆՔ ԿԸ ՅԱՆԿԱՑԻՆՔ ԲՈԼՈՐՈՎԻՆ ԱՋԱՏԵԼ ՁԵԶ ԱՅՆ ԼԾԻՑ, ՈՐԻ ՏԱԿ ԴՈՒՔ ՏԱՆՋՎՈՒՄԷՔ, ԲԱՅՑ ԴՈՒՔ ԳԻՏԷՔ, ՈՐ ԵՒՐՈՊԱՑԻ ՆԱԽԱՆՁԸ ՉԷ ԹՈՑԼ ՏԱԼԻ ՄԵՁ ԱՅՍ ԱՆԵԼՈՒ»

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Վան, 1 մարտ 78

Չը գիտեմ թէ այս նամակ երբ կը հասնի ձեզ. բայց ուզեցի դարձեալ գրել, մտածելով որ լաւ է ուշ քան թէ երբէք։ Քանի որ Էրզրում անցած է ռուսներին ձեռք, Կ. Պոլիսէն Վան փոստն կերթեկէ Սամսօնի և Տիգրանակերտի ճանապարհով։ Ճանապարհի երկարութիւն, ձմեռի սաստկութիւն, անանցնելի ցեխով ծածկուած ճանապարհներ. երբ այս ամենը ի նկատի ունենաք, չէք զարմանար անշուշտ որ փոստն Կ. Պոլիսէն մինչև այստեղ հազիւ երկու ամիսէն կը հասնի, մինչդեռ Տրապիզոնի և Էրզրումի ճանապարհով 20—25 օրէն կը հասնէր։ Այս նամակս Կ. Պոլիսի ճանապարհով յղած եմ ձեզ, որովհետև թէպէտ Վանէն մինչև Պարսկաստան կարաւանն 2—3 օրէն կը գնայ և Պարսկաստանի ճանապարհով շուտ կը հասնի ձեզ նամակ, բայց ամեն ժամանակ կարաւան չը գնար և ճանապարհորդների հետ նամակ յղել շատ վստահելի չէ. իսկ Թիւրքիայէն Պարսկաստան փոստի երթեւեկութիւն մինչև այսօր դեռ չէ հաստատուած, թէպէտ շատ վաղուց է որ առևտրական յարաբերութիւններ կան։

Հայրենասէր Սանուց ընկերութիւն փետրվարի 27-ին չքեղ կերպով կատարեց Վարդանանց 1427-երորդ տարեդարձի հանդէսն իւր կիրակօրեայ դասարանի և լսարանի մէջ։ Թէպէտ նոյն օր սաստիկ ցուրտ էր և առատ ձիւն կը տեղար, բայց հանդիսականների մեծ բազմութիւն եկած էր, այնպէս որ սարսուեցան վարժարանի մեծ սրահին, ուր հաւաքուած էին, պատուհաններն բանալ որ շնչառութիւնն չը նեղուի։ Հայրենասիրական ճառեր, երգեր և ոտանաւորներ խօսուեցան։ Ժողովուրդ շատ ոգեորված էր և մեծ եռանդով կը լսէր երբ կը պատմուէին Վարդանի ժամանակ հայերի կրած նեղութիւններն և այդ նեղութիւններէ ազատուիլ ցանկալով նոցա արած աշխատութիւններ և քաջութիւններ։ «Բարեսիրաց» ընկերութիւնն ալ խըմբովին ներկայ էր այնտեղ և կաջակցեր Հայրենասէր ընկերութիւնին և այս տարի Վարդանանց հանդէս չատ չքեղ կը կատարուի քան թէ նախորդ տարիներ։ Քաղաքիս թէ ուսեալ խումբն և թէ հարուստ դասակարգն պատուած էին այս հանդէս իւրեանց ներկայութիւնով։ Պ. Տիգրան Ամիրճանեանի և պ. Հայրապետ Ճանիկեանի, քաղաքիս առաջնակարգ դասատուներին խօսած խօսքեր մեծ ազդեցութիւն ունեցան հանդիսականներին վրա։ Ժողովուրդ մեկնեցաւ հանդիսավայրէն, վառ զգացումներ և անմոռանալի յիշատակներ տանելով իւր սրտի մէջ և ընորհակալութիւն յայտնելով Հայրենասէր ընկերութիւնի տեսուչ պ. Մ. Նալբանեանի որ իւր ազգասիրական աշխատութիւններով ծանօթ և սիրելի եղած է այստեղ ամենին։

Ալիւր գիւղն մի ցաւալի կորուստ ունեցաւ։ Արարատեան ընկերութիւնի վարժարանին դասատու պ. Զաքար Համբարձումեան մեռաւ։ Պ. Զաքար աշխատող մի երիտասարդ էր. նորա շնորհով Ալիւր գիւղն ազատ մնաց շատ հարստահարութիւններէ պատերազմին ժամանակ։ Նա շատ անգամ պաշտպանած էր ժողովրդական իրաւունքներն, բողոքելով ուր հարկն է։ Կիմանամք թէ Արարատեան ընկերութիւնն Կ. Պոլիսէն մի նոր դասատու կառաքէ Ալիւր գիւղին համար։

Թէ Բայազէդ կանցնի ռուսի ձեռք, ինչպէս կը լսեմք, այն ժամանակ Վան կը լինի Թիւրքական Հայաստանի սահմանագլուխ քաղաքներէ մին և կարելի է որ առևտրական յարաբերութիւններ սկսին Կովկասի և Վանի մէջ։ Վանէն մինչև Բայազէդ կըտևէ 20 ժամ կարաւանի սովորական գնացքով և Բայազէդէն դէպի Տփղիս փոխադրութիւն և երթեւեկութիւն հեշտացած կը լինի արդէն փոստի և ֆուրգոնների միջոցով։ Իրաւ է թէ Բայազէդի և Բերկրիի մէջ Ապաղայի դաշտն (Ապահունիք դաւառ), քրդական լինելով, երբեմն ճանապարհորդներն նեղութիւններ կը կրեն. բայց երբ կարաւանների կանոնաւոր երթեւեկ լինի, վտանգն կը դադարի, որովհետև այդ տեղեր քուրդեր ընդհանրապէս հաստատ բնակութիւն ունեցողներ են և ուրիշ ցեղերի նման բոլորովին թափառական չեն։ Կովկասեցին կամ բայազէդցին կարող է շատ վաճառքներ հանել Վանէն և մեծ՝ շահեր ունենալ։ Օրինակ, այծի մորթ ընտիր տեսակ կը ծախվի Վան 50 կոպէկ, աղուէսի մորթ 75 կոպէկ. կը դառնին նաև կուզի, գայլի և այլն մորթեր աժան գինով։ Վանի ծովէն առատօրէն կելնէ հայբարակ զոր տեղացիներ կը կոչեն բարակ և 1 փութն կը ծախուի 9 կոպէկի։ Տառեխ կոչուած մի տեսակ ձուկ կելնէ Մարմեռի գետէն, համեղ և շատ ժանագին. 100 հատ կը ծախուի 3 կոպէկի. թէ հարուստ և թէ աղքատ կը գնեն այդ ձուկէ և աղելով կը պահեն և ամբողջ տարին կուտեն։ Վանի հարաւակողմի Շատախ դաւառն կը գտնեն մաշլախ կոչուած մի տեսակ ազնիւ շալ որ Կ. Պոլիս, Եգիպտոս և այլ տեղեր կը տարուի։ Եւրոպացին մի ընկերութիւն մի քանի ֆրանսիացիներ առաքած է այստեղ որոնք Վանի շրջակայներէն, մինչև Տիարբի և Տուխուբի սարական լեռներ գնալով, մի տեսակ վարակաւոր ընկուզենիներ կորոնեն և շատ թանգ գնելով կը յղեն Եւրոպա։ Թէ ինչ բանի համար այդ ընկուզենիներ կը գնեն և կը յղեն Եւրոպա, չը գիտեմք. միայն այս գիտեմք որ շատ ծանր ծախքեր կանեն. մինչև անգամ յատուկ ճանապարհներ չինեցին որ այդ ծառեր դիւրին իջեցնեն լեռներէն. և ամեն տեսակ ընկուզենիներ չեն ընդունիր, այլ կընտրեն, իւրեանց ծանօթ յատկութիւններ գտնելով ծառին վրայ։

Վերջապէս, թէ առևտրական գործերէ հասկացող մարդեր այցելեն այս կողմեր, շատի ընդարձակ ասպարէզ կը գտնեն։ Առևտրական յարաբերութիւնները կառաջնորդեն ազգային մէջ բարոյական յարաբերութիւնների Կովկասի և Վանի մէջ։ Թէ որչափ հարկաւոր և օգտակար են այդպիսի յարաբերութիւններ, աւելորդ կը համարիմք գրել։

* * *

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վերջին ժամանակներում մի քանի իտալական լրագիրներ սկսեցին շատ թշնամաբար վերաբերվել դէպի Աւստրիան։ Այսպէս օրինակ «Capitale» ուղղակի պախարակում է Աւստրո-Ունգարիային այն բանի համար, որ նա դաշնակցութիւն է կապել Ֆրանսիայի հետ Իտալիայի դէմ և երկու տէրութիւններին էլ սպառնում է Գերմանիայով, որը չի թալ տայ որ իր վրա յանկարծ յարձակվին և համաշխարհային հանդիսի վերջանալուն չի սպասի, յայտնի նպատակների իրագործումը արգելելու համար։

—Ինչպէս երևում է լրագիրներից յաղորդված լուրը, իբր թէ Գիւֆօր վախճանվել է, սխալ է։ Մենք քաղեցինք մեր լուրը մայրաքաղաքի լրագիրներից և երևում է որ Գիւֆօրի անունը այդ լրագիրներում խառնել էին Դանֆէր գընդապետի անուան հետ, որ Նորերումս վաճանվել է։

—Լրագիրները հաղորդում են, որ Բերլինի համալսարանի ուսանողները հանդիսաւոր կերպով, ջահերով ներկայացան Գերմանական Կայսրին նրա աղատվելը չնորհաւորելու համար։ Կայսրը սիրով ընդունեց ուսանողներին, որոնցից մէկը ճառ խօսեց։ Կայսրը չնորհակալութեամբ պատասխանեց խօսած ճառին և յետոյ սեղմելով խօսող ուսանողի ձեռքը, ասաց բոլոր ուսանողներին. «այսպիսով ձեր ամենքի ձեռքը սեղմում եմ։» Մի քանի ժամանակ Վիլհելմ կայսրը հանաքներ էր անում ուսանողների հետ։ Յետոյ ուսանողները հանդիսով գնացին Բերլինի փողոցներով։

—Լեոն XIII պապը, մայիսի 5-ին մեծ չքեղութեամբ ընդունեց սուլթանի դեսպան Վէդրոս-էֆէնդի Կուջումեանցին։ Պատասխանելով Վէդրոս-էֆէնդի Կուջումեանցին, պապը չնորհակալութիւն յայտնեց նրան նրա սուլթանի կողմից ասած զգացմունքների համար։ Նա աջողութիւն ցանկացաւ սուլթանին և չնորհակալութիւն էր յայտնում Թիւրքիայի կաթոլիկներին հովանաւորելու և պաշտպանելու համար։ Նորին սրբութիւնը այն համոզմունքը յայտնեց, որ կաթոլիկների պաշտպանութիւնը կը չարունակվի և մինչև անգամ կը մեծանայ կայսերութեան բարեյաջողութեան համար։ Պապը չնորհեց սուլթանի դեսպանին Ս. Գէորգի չքանչանի աստղը։ Թիւրքաց դեսպանի ճառից և պապի պատասխանից յետոյ, դեսպանը մնաց Նորին սրբութեան մօտ մի փոքր ժամանակ։ Սրանից յետոյ նա տեսակցութիւն ունեցաւ Կարդինալ Ֆրանկիի հետ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԼՈՆԴՈՆ, 15/27 մայիսի։ «Daily Telegraph» լրագիրը հաղորդում է հետևեալը։ Մինիստրների նիստը այսօր հրահանգներ կը կազմի Անգլիայի ներկայացուցչի համար կոնդրէսում։ Բոլգարիայի տարածութիւնը կէսից աւելի պակասեցրած է, Հայաստանը նշանաւոր կերպով սահմանափակված է։ Բանակցութիւններ են սկսված պատերազմական վարձատրութիւնը վերցնելու համար։

Սարհատը երկար էր թափառել երկրի վրա, շատ ազգեր և շատ աշխարհներ էր տեսել. բայց իր կեանքում ոչ մի լաւ մարդու չէր հանդիպել, և այդ պատճառով, նա մարդկանց վրա կազմել էր խիստ վատ գաղափար։ Բոլոր մարդերին նա աւազակներ էր համարում, այն զանազանութեամբ միայն, որ մէկը կոպիտ սրով է յափշտակում, միւսը խելքով, երրորդը արհեստով, չորրորդը մարդասիրութեան և քաղաքակրթութեան անունով և այլն։

Այս տեսակ մտքեր բացատրելու համար Սարհատը իր առանձին լեզուն և արտասանութեան ձևերն ունէր. «աւազակութիւնը, ասում էր նա, մարդկանց մէջ զանազան գոյներով և շատ անգամ գեղեցիկ ծրարներով է յայտնվում. դու պատուիր արտաքին կեղևը, և կը տեսնես միջուկը աւազակութիւն է, և աւելի ոչինչ։»

Սարհատը ինքն էլ աւազակ էր, մի արիւնահեղ և սոսկալի աւազակ. նա եթէ ծնված լինէր մի ուրիշ երկրի վրա և մեծանար մի ուրիշ շրջանում, գուցէ ուրիշ տեսակ մարդ, կամ այլ տեսակ աւազակ կը դառնար, որովհետև ամեն մի աւազակի գործունէութիւնը համապատասխանում է նոյն հասարակութեան, որի միջից նա յայտնվում է։ Աւազակը մի սարսափելի բողոք է հասարակութեան անկարգ կազմակերպութեան դէմ։ Հայաստանի լեռների վրա, ուր երկու հակառակ ծայրերի վրա կանգնած են երկու հակառակ ազգութիւններ,—մէկը՝ վերջին սարկութեան հասած հայը, միւսը՝ վերջին բարբարոսութեան հասած մահմեդականը,—և եթէ սարուկների կողմից բողոք է բարձրանում դէպի բռնակալութիւնը, դա բնականաբար պիտի ընդունէր ոչ այլ կերպարանք, բայց միայն Սարհատի աւազակային կերպարանքը ...

Բայց զարմանալին այն էր, թէ ինչու այնքան փոքր էր Սարհատների թիւը. նրա ամբողջ հրոսակը կազմված էր տասերկու քաջերից, որոնց նա կոչում էր «աւազակների առաքելութիւն»։ —Այս հարցը բացատրելու համար պէտք է երկար ու բարակ քննութիւնների մէջ մտնենք. մենք թողնում ենք այդ, ահա Մըստոն կրկին յայտնվեցաւ, տեսնենք, նա ինչ է ասում։

—Ամեն բան իմացայ, ասաց նա։

—Մէկ-մէկ ասա, ինչ որ կը հարցնեմ խօսեց Սարհատը։—Ձիաւորները քանի հոգի էին։

—Համբարեցի, յիսունից աւել չեն։

—Ո՞ր ցեղից են։

—Հարաօշի են *)։

—Գերիները և թալանը ո՞ր կողմից են բերում։

—Շատախու կողմերից **)։

—Ո՞ւր պիտի տանեն։

—Դէպի Սօմայի։ ***)

—Այս գիշեր ո՞րտեղ միտք ունեն իջևանելու։

—Հասպիստանի հովիտների մէջ, Խանա-Սօրի մօտ։

Սարհատը թողեց իր հարց ու փորձը և սկսեց մատներով լուռ մի բան հաշուել. յետոյ նա կրկին դարձաւ դէպի պատանին։

—Ի՞նչ ես կարծում, Մըստո, դրանք երբ կը հասնեն Սախկալ-Թութան կիրճին։

—Մըստոն բոպէական մտածութենից յետոյ պատասխանեց.

—Սախկալ-Թութան ****) կիրճին կը հասնեն, երբ արևը մտնելու մօտ կը լինի։

—Ես էլ այսպէս եմ կարծում, ասաց Սարհատը։

—Հիմայ լսիր, Մըստո, աւելացրուց նա.—ինչքան ժամանակում կը հասնես մինչև Բիժինկերտ գիւղը։—Ճանաչում ես։

Մըստոն նայեց արևին և պատասխանեց.

—Ուղիղ կէսօրին այնտեղ կը լինեմ։

—Շատ լաւ, չարունակեց Սարհատը.—դու տեսել ես Բիժինկերտից փոքր ինչ հեռու ձորի մէջ մի մատուռ։

—Տեսել եմ, երկուսն է, մէկը քանդված է։ Ո՞րն ես ասում։

—Հէնց այն քանդվածն եմ ասում։

—Ճանաչում եմ։ Մի գիշեր այնտեղ թաք եմ կացել, երբ մի ձի էի գողացել։ Լաւ թաքնվելու տեղ է։

Սարհատը յետոյ ուրիշ հարց առաջարկեց։

—Ի՞նչ տեսակ կենդանիների ձայնին նմանեցնել կարող ես։

—Շատերի.—չան նման հաչել գիտեմ, աքլորի նման խօսել գիտեմ, էշի նման կը զըռամ, գայլի նման կը ոռնամ, գառան նման կը մըռամ, կատուի նման միայու կանեմ, հօտօպի նման բէ-բէ կանեմ.—էլ ինչ ես ուզում։ Ուրիշ շատերն էլ գիտեմ։

—Այդ վերջինը բաւական է։ Հիմայ լսիր։ Ուղիղ կը գնաս դէպի այն քանդված մատուռը, որտեղ գողացած ձին թաքցրիր։ Դեռ չը հասած մատուռին մի բլուր կայ....

—Որի գլխին տնկած է մի ծակ քար, աւելացրուց Մըստոն։

—Այո։ Այն ծակ քարի մօտ կը կանգնես, երեք անգամ հօտօպի ձայն կը հանես. քեզ կը պատասխանեն նոյն ձայնով։ Յետոյ ձայնդ կը փոխես. երկու անգամ բուի ձայնով կը կանչես։ Այն ժամանակ քեզ մօտ կը յայտնվի մի մարդ։ Դու նրան կասես, դեռ արևը մայր չը մտած պատրաստ լինեն Սախկալ-Թութան կիրճի մօտակայքում։

—Կարելի է, նա հարցրուց, թէ քեզ ով ուղարկեց։

—Իմ անունը կը յայտնես։

—Կարելի է, նա չը հաւատայ

—Այս մատանին ցոյց կը տաս։

Սարհատը հանեց իր մատից մատանին և տուեց Մըստոյին։

—Կարելի է, նա հարցրուց, թէ ինչ գործի համար է։

—Դու կը պատմես այդ գերիները տանող քարաւանի մասին բոլորը, ինչ որ տեսար, և կասես, թէ քարաւանը Սախկալ-Թութան կիրճի մէջ մտածին պէս, պէտք է նրա առաջը կտրենք։ որ գերիները ու թալանը խլենք քուրդերից։

—Իմացայ։ Նրանք քանի՞ հոգի են։

—Տասն և երկու։

—Ո՞վքեր են։

—Իմ ընկերները։

—Տասն և երկու հոգին բաւական է յիսունի դէմ Սախկալ-Թութան կիրճում, նկատեց Մըստոն.—ես էլ նրանց հետ, տասն և երեք կը լինենք։ Բայց 13 թիւը նաս է։

—Ինձ էլ հաչելու լինես, 14 հոգի կը լինենք, ասաց Սարհատը, 14-ը նաս *) չէ։

—Մեզանից չորս հոգի բաւական է, որ կիրճի դուռը կտրէ, էլ ինքը սատանան չէ կարող այն՞ տեղից դուրս գալ, նկատեց Մըստոն։—Ի՞նչ լաւ տեղ ընտրեցիր, աղայ, բայց դու ուր կը մնաս։

—Ես ծածուկ կը հետևեմ քարաւանին, մինչև կիրճին հասնելը։—Բայց դու այն ասա, ոտքդ քեզ խօ չի նեղացնի. մինչև Բիժինկերտ բաւական հեռու է։

—Ոչ, չի նեղացնի, անփոփուած գնդակը մսի միջովն է անցել, ոսկորին չէ դիպել. մահլամ եմ գրել ու պինդ կապել։

—Վերքը քանի օրվայ է։

—Երեք օրվայ, այսպիսի վերքեր շատ է տեսել Մըստոն. վնաս չունի։

—Դէ, հիմայ գնա։

Սարհատը և Մըստոն բաժանվեցան, մէկը սկսեց գնալ դէպի քանդված մատուռը, միւսը սկսեց զարտուղի ճանապարհներով հետևել գերիվարներին։

(Կը չարունակվի)

Սարհատը երկար էր թափառել երկրի վրա, շատ ազգեր և շատ աշխարհներ էր տեսել. բայց իր կեանքում ոչ մի լաւ մարդու չէր հանդիպել, և այդ պատճառով, նա մարդկանց վրա կազմել էր խիստ վատ գաղափար։ Բոլոր մարդերին նա աւազակներ էր համարում, այն զանազանութեամբ միայն, որ մէկը կոպիտ սրով է յափշտակում, միւսը խելքով, երրորդը արհեստով, չորրորդը մարդասիրութեան և քաղաքակրթութեան անունով և այլն։

Այս տեսակ մտքեր բացատրելու համար Սարհատը իր առանձին լեզուն և արտասանութեան ձևերն ունէր. «աւազակութիւնը, ասում էր նա, մարդկանց մէջ զանազան գոյներով և շատ անգամ գեղեցիկ ծրարներով է յայտնվում. դու պատուիր արտաքին կեղևը, և կը տեսնես միջուկը աւազակութիւն է, և աւելի ոչինչ։»

Սարհատը ինքն էլ աւազակ էր, մի արիւնահեղ և սոսկալի աւազակ. նա եթէ ծնված լինէր մի ուրիշ երկրի վրա և մեծանար մի ուրիշ շրջանում, գուցէ ուրիշ տեսակ մարդ, կամ այլ տեսակ աւազակ կը դառնար, որովհետև ամեն մի աւազակի գործունէութիւնը համապատասխանում է նոյն հասարակութեան, որի միջից նա յայտնվում է։ Աւազակը մի սարսափելի բողոք է հասարակութեան անկարգ կազմակերպութեան դէմ։ Հայաստանի լեռների վրա, ուր երկու հակառակ ծայրերի վրա կանգնած են երկու հակառակ ազգութիւններ,—մէկը՝ վերջին սարկութեան հասած հայը, միւսը՝ վերջին բարբարոսութեան հասած մահմեդականը,—և եթէ սարուկների կողմից բողոք է բարձրանում դէպի բռնակալութիւնը, դա բնականաբար պիտի ընդունէր ոչ այլ կերպարանք, բայց միայն Սարհատի աւազակային կերպարանքը ...

Բայց զարմանալին այն էր, թէ ինչու այնքան փոքր էր Սարհատների թիւը. նրա ամբողջ հրոսակը կազմված էր տասերկու քաջերից, որոնց նա կոչում էր «աւազակների առաքելութիւն»։ —Այս հարցը բացատրելու համար պէտք է երկար ու բարակ քննութիւնների մէջ մտնենք.

*) Քրդերի մի կիսավայրենի ցեղ է, որ բոլորովին հաստատաբնակ կեանք չէ վարում։

**) Մի գաւառ է Վասպուրականում։

***) Մի գաւառ է Պարսկաստանի Ուրմի նահանգի մօտ։

****) Սախկալ-Թութան նշանակում է մօրուքից բռնող, այսպէս կոչվում են առհասարակ այն նեղ և դժուար անցանելի կիրճերը, որոնց մէջ աւազակներն աւելի հեշտութեամբ են որսում ճանապարհորդներին։

*) Նաս նշանակում է անբարի կամ չարագուշակ։ 13 թիւը նաս է համարվում մահմեդականների մէջ. համբարելու միջոցին 13 թիւին հասնելու ժամանակ մահմեդականը միշտ անց է կացնում, ասելով. «13 չէ։»

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ պատիւ ունի յայտնել, որ գրախանութը մայիսի 7-ից տեղափոխվեցաւ Միքայելեան կամուրջից և այժմ զետեղված է ԱՐԾՐՈՒՆՈՒ գալլերէում, Պ. Յովհաննիսեանի (նախկին Իվանովի) մատենադարանում, նոյն իսկ մատենադարանին կից: Գրախանութն ստացած ունի, բացի դասագրքերից և ձեռնարկներից, բազմաթիւ նոր ընթերցանութեան գրքեր: Պատուէրները կատարվում են արագ և ճշտութեամբ:

1—2

Խնդրեմ Մոզդոկ սուրբ Գէորգ եկեղեցու ժողովրդականներին և ժամաւորներին շնորհ բերել ամսոյս 21-ին, կիրակի օրը ժամի 12-ին, Գայեանեան ուսումնարանի դահլիճը, խորհուրդ անելու եկեղեցու գործերի վրա: Ժողովին ներկայ կը լինի սրբազան առաջնորդը:

Երեցփոխան Խաչ. Դաւթեանց

1—2

«ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԹԵՐԹԻ» խմբագրութիւնը պատիւ ունի ծանուցանել, որ ամսագրի նշանակած ժամանակին չը հրատարակվելը կախված էր մի քանի կարևոր և խմբագրութենից անկախ պատճառներից: Բայց խոստանում է առաջին համարը անպատճառ յունիսի 10-ին հանել, իսկ հետևեալները կանոնաւորապէս ուղարկել ամսի 10-ին:

Խմբագրութիւնը խնդրում է բաժանորդ գրվել ցանկացողներից շտապեն ստորագրվել, որպէս զի կարելի լինի մօտաւորապէս որոշել տպագրվելի օրինակների թիւը, որը թղթի թանգութեան պատճառաւ գործիս՝ մէջ մեծ նշանակութիւն ունի:

Աւելորդ չէ համարում յիշեցնել այն բաժանորդներին, որոնք լոկ նամակներով են ստորագրվել, որանց բաժանորդագինը ուղարկելու, որ վճարը կանխիկ է: Առանց բաժանորդագինը ստանալու ամսագիրը ոչ ոքին չի ուղարկվի:

Խմբագիր Յակոբ Տէր-Յովհաննիսեան:

1878 մայիսի 5-ին.

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ

ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ

ВЪ ГАЛЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՈՒՄ

ՇԱՏ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

Կենդանիների հովանաւորութեան Թիֆլիսի ընկերութեան վարչութիւնը յայտնում է, որ վարչութեան կազմակերպութիւնը, ընդհանուր ժողովների վճիռներին համեմատ, այժմ հետևեալն է. Նախագահ Ս. Ա. Տալեզին, փոխանախագահ Դ. Ի. Կիպիանի, վարչութեան անդամները՝ իշխան Դ. Դ. Ջօրջաձէ, Մ. Ն. Գարսեւանով, և անդրկովկասեան մուֆտի Հաջի-Էֆէնդի-Մուստաֆա-Էֆէնդի-Զադէ: Վարչութեան փոխ անդամներ. Մ. Կ. Լօմիձէ, Ա. Ի. Տիմիրիազև, Ա. Ի. Շամշարով, գանձապահ Ա. Գ. Սերգէև, փոխ գանձապահ Գ. Ն. Խոսէլեանի, քարտուղար Ն. Ի. Մեչչերսկի, փոխ քարտուղար Ս. Ս. Շչուկին:

Ներսիսեան Հայոց Ազգային—Հոգևոր դպրոցի աշակերտաց տարեկան հարցաքննութիւնը լինելու է հետևեալ կարգաւ:

Օրեր	Ամսաթիւ	ԱՌԱՐԿԱՆԵՐ	Դասատուններ
	1878 Ապրիլի		
Շաբաթ	29	Կրօն, եկեղեցական պատմ. սուրբ պատմ.	I—VI.
»	»	Տօմար	V.
	Մայիսի		
Երեքշաբթի	2	Հայոց լեզու	I—VI.
»	»	Պատմութիւն հայոց մատենագրութեան. .	VI.
Ուրբաթ	5	Ռուսաց լեզու	I—VI.
»	»	Ռուսաց պատմութիւն.	V.
Երկուշաբթի	8	Հայոց լեզու, ռուսաց լեզու, թուաբանութիւն	Պատրաստական դասատուն
Չորեքշաբթի	10	Ֆրանսիացւոց լեզու	II—VI.
»	»	Մանկավարժութիւն	VI.
Ուրբաթ	12	Աշխարհագրութիւն	I—VI.
»	»	Ընդհանուր պատմութիւն	II—IV.
Չորեքշաբթի	17	Մաթեմատիքա	I—VI.
»	»	Գծագրութիւն	II և III.
Շաբաթ	20	Բնագիտութիւն.	I—VI.
»	»	Ֆիզիքական աշխարհագրութիւն	IV և V.
»	»	Ֆիզիքա	V և VI.
Ուրբաթ	26	Ընդհանուր պատմութիւն	V և VI.
»	»	Հայոց պատմութիւն	IV, V և VI.
»	»	Պատմութիւն ընդհանուր մատենագրութեան	VI.
Շաբաթ	27	Գրութիւն, նկարչութիւն երգեցողութիւն .	

Հարցաքննութիւնը սկսվելու է առաւօտեան 8 ժամին. իսկ վերջացնելու ոչ կանուխ քան $12^1/_2$ ժամին միջօրէի:

Հոգաբարձու Մ. Դոլուխանեանց

Գործաւար Բ. Ջալալեանց

ТИФЛИССКІЙ КОЖЕВЕННЫЙ ЗАВОДЪ

ԹԻՖԼԻՍԵԱՆ ԿԱՇՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

Տամօժէննայա փողոցի վրա Յունաց եկեղեցու դիմաց տուն № 22

Պատիւ ունի յայտնելու պ. պ. վաճառականներին և սպառողներին, որ այդ գործարանում գործվում են և նորա մէջ միշտ մեծ քանակութեամբ գտնվում են ամեն տեսակ ԿԱՇԻՆԵՐ կօշիկների, թամբերի, կառքերի սրունքների համար և նոյնպէս հում կաշիներ:

Մեծ քանակութեամբ վաճառելը կատարվում է գործարանի կանտօրայում, որտեղ ընդունվում են և պատուէրներ: Մաս մաս ծախվում է Սիօնի մայր եկեղեցու դիմաց գտնվող մագազինում:

25—18 (2)

Շուտով հրատարակելու եմ իմ ժողոված «Անեկդոտները», որոնք պարունակում են իրանց մէջ շատ երևոյթներ ազգային ներկայ և անցեալ կեանքից:

Տպվելու են բաժանորդագրութեամբ. ամեն մի օրինակի գինը 50 կոպ. է: Թիֆլիսում բաժանորդ կարելի է գրվել պ. Զաքարիա Գրիգորեանցի գրավաճառանոցում:

3—3 Գ. Շերմազանեանց.

Երիտասարդ, որ գիտէ հաշուապահութիւն (բուղալտերիա) Հայերէն և Ռուսերէն լեզուներով, կամենում է տեղ գտնել: Համաձայն է և քաղաքից դուրս ծառայելու, հասցէն կարելի է թողնել «Մշակի» խմբագրատանը:

2—3

ՄԱՅԻՍԻ 19 — ՏԵՂԵԿԱՑՈՅՑ — ԹԻՖԼԻՍ 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Մայիսի 18-ին)

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	55
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1550	—
Հին 20 կ. 72 պր. 1000 »	1340	—
Վիգրիշնի 5% առաջին փոխառութեան տոմ. 100 »	233	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	235	—
Մարսելի կուրսը 237—	100	—
Լօնդօնի կուրսը Օդեսայի վրա	10	67
Վենայի կուրսը առէ 112 գլ.	121	—
Դաւրեժի բարաթը. . .	5	90
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	300	
Փօթի թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	125	—
Շաքարը բրօյկու . .	8	—
» միւս տեսակը.	7	90
» շաքարաւազը.	5	90
» տրանզիտը. .	6	60
» մաքուր վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	40
Միւս տեսակը հին սերմից.	7	20
Բուրդը Թուշի . . .	8	—
» Թարաքամի .	4	20
Ալիւր Շորագալու . .	1	80
» Երևանի. . . .	—	—
Գարին.	1	30
Մոմը բնաճարպի (стеар.)	13	—
Մետաքս Նուխվայ. .	180	—
Կախեթունը. . . .	100	—
Կոկոնը Նուխվայ (բով.)	45	—
Ֆրեդոնը (լաւը) Ագուլեաց	55	—
Կոֆէն մոկօի. . . .	27	—
» լիվանի . . .	24	—
» մարտինկօյինը	20	—

ՀԵՌԱԳԻՐ

ՀԵՌԱԳԻՐ	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Ծննդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ: Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ: Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական:

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան: Բժշկապետ Անանով:

ՓՕԹԻ ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան: Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ:

	առաւօտ.	երեկոյեան.
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Րիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	
	առաւօտ.	
Փօթիից . .	9. 13	
Րիօն . . .	12. 13	
Միխայլօվօ.	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	1 8
Թիֆլիս. . .	9. 31	7 56

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ .	5. 22	3. 92	2. 18
Րիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի . .	13. 1	9. 75	5. 42

ՓՈՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7: Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան:

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր: Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը: Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ: Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր: Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի: Բելիկլիւչի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ:

ՆԱՄԱԿՆԵՐ	կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ 9 ժամից մինչև 1 կէսօրից յետոյ:

Երկուշաբթի. վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և ականջի հիւանդութիւններ:

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բէյխ աչքի հ. 9—11 ժամ, Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան:

Չորեքշաբթի. վէրմիշէվ ներքին հ. Բակստ կրծքային և ջղային:

Հինգշաբթի. վէրմիշէվ ներքին հ. Գավրօնսկիյ կանանց և մանկաբարձութեան. 9—10 ժամ, Բակստ վեներական և կաշու հ. Օբրէխտ ատամնացաւեր:

Ուրբաթ. վէրմիշէվ ներքին հ. Բախուտով մանկաբարձութեան, կանանց և երեխաների հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների հ.

Շաբաթ. վէրմիշէվ ներքին հ. Բէյխ աչքերի հ. Բակստ կրծքային և ջղային հիւանդութիւններ.

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ՍՂՆԱԽ. Դիտակ. Ձեր նամակից լուրեր քաղեցինք, գուցէ միւս մասն էլ կը տպենք:

—ԹԻՖԼԻՍ. Ա. Զ. Ձեր նամակը չարժէ ամբողջապէս տպել: Նիւթը շատ աննշան է:

—ԲԱԳՈՒ. Զ. Եթէ կը ստանանք, կը յանձնենք ում հարկն է, բայց պէտք է ասել, որ մենք ամեն տեսակ յանձնարարութիւններ չենք կարող կատարել:

—ԹԻՖԼԻՍ. Ս. Մ. Ն. Ստացանք 20 ռուբլ յօգուտ Արարատեան ուսումնարանի, նամակը կը տպենք հետևեալ համարներից մէկում:

—ԵՐԵՒԱՆ. Տ. Այո, հիմիկուց կարելի է «Մշակին» գրվել կէս տարով, կէս տարվայ բաժանորդագինը 6 ռուբլ է. միթէ չէք կարդացել մեր յայտարարութիւնը:

Дозволено Цензурою Мая 18 Тифлисъ 1878 г.

Типографія Мартиросіанца

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ